40,000, Ալեքսանդրապոլ՝ 12,000, Բորչալու՝ 7000 եւ Սեւանայ լճի կողմերը (Նոր Բայազիդ) 26,000, ապա Պարսկաստանից Երեւան եկան 3,900 ընտանիք հայեր, Նախիջեւան՝ 2363 ընտանիք, եւայլն: Ընդամէնը անշուշտ աւելի քան 110,000 հոգի: Այս վերջին թիւն էլ իր կարգին համապատասխանում է վերեւի այն տեղեկութեան թէ՝ Անդրկովկասի հայութեան 1/3-ից մինչեւ 1/2-ը Տաճկաստանից ու Պարսկաստանից է գաղթած եղել: Ապա՝ «կովկասեան երկրամասի բոլոր քաղաքներում», ասում է Հ., «կարելի է գտնել հայկական փոքր համայնքներ, ամէն տեղ՝ որպէս առեւտրականներ եւ արհեստաւորներ, որովհետեւ վրացական ցեղերը արհամարհում են առեւտուրը: Բայց հայ գիւղեր եւս կան Ելիզաւետպոլ (Գանձակ) շրջանի լեռնային մասում, ապա նաեւ՝ Շամշադնում եւ Ղազախում (որ է՝ այժմեան Դիլիջանի գաւառ): Կախէթիայում նրանք բնակութիւն հաստատեցին Հերակլ Բ. թագաւորի օրով: Ախալցխայի գաւառում գտնւում են մի շարք հայ գիւղեր»:

Հաքստհաուզէն անձամբ չէ եղած Ղարաբաղ, բայց նրա մասին ստացել է տեղեկութիւններ իրազեկ աղբիւրներից:

Ղարաբաղի հայութեան թուի մասին դրժբախտաբար որոշ տուեալ չենք գտնում Հաքստհաուզէնի մօտ, այլ միմիայն հետեւեալ ընդհանուր տեղեկութիւնները.

«Բացի այժմեան թուն Հայաստանից,— ասում է նա (Ա. 216),— ամենաշատ հայեր կան Ղարաբաղ նահանգում: Հարթավայրերից նրանք աւելի դէպի լեռներն են քշուել»:

Թէ ի՞նչ թիւ էին կազմում այն ժամանակ հայերը Ղարաբաղում եւ ո՞ր տոկոսը ընդհանուր աղգաբնակութեան, այդ մասին տեղեկութիւն չենք ստանում:

Իսկ ի՞նչ ենք իմանում Վրաստանի, յատկապէս Թիֆլիսի հայութեան քանակի մասին:

Թիֆլիսի աղգաբնակութեան մասին Հաքստհաուզէն Դիւբուա-ից առնելով, որ իր հերթին էլ «1834-ի պաշտօնական աղբիւրներից» է քաղած եղել իր տեղեկութիւնները,— հետեւեալ թուերն է հաղորդում՝ չհաշուելով զօրամասերը: Նկատի ունենալով նրանց պատմական կարեւոր նշանակութիւնը, առաջ ենք բերում վիճակագրական տախտակը ամբողջութեամբ:

Դասեր	Վրացիներ	Հայեր	Մահմեդական թաթարներ	Ընդամէնը
Մոքալաքի (բուն քաղաքացի, քաղքենիներ)	110	2,500	——	2,610
Պետակ. գիւղացիներ (ազատ)	1,751	10,237	612	12,600
Եկեղեցապատկան գիւղացիներ (ճորտեր)	800	2,150	——	2,950
Մասնապատկան գիւղացիներ (ճորտ)	1,180	2,210	110	4,500(?)
Ազատ երկրագործներ	150	250	——	400
Իմերեթցի բանուորներ, որոնք անհաստ. բնակ. ունին	——	——	——	300
Հրեաներ	——	——	——	60
Իշխաններ եւ ազնուականներ	——	——	——	1,090
Հոգեւորականներ	286	473	1	780
	4,277	17,820	723	25,290

Մասնապատկան գիւղացիներին կամ ճորտերին վերաբերող թուերի մէջ, ինչպէս նկատեց ուշադիր ընթերցողը, 1000-ի սխալ կայ, այսինքն՝ կամ գումարն է սխալ, 4500-ի փոխարէն 3500 պիտի հաշուել, եւ կամ գումարելիներից մէկին է 1000-ով պակաս նշանակուած, (ինչ որ հաւանական է):

Ուրեմն, ըստ 1834-ի պաշտօնական աղբիւրների Թիֆլիսի բնակչութեան ընդհանուր